

աշակերտ Խորենացւոյն, պերճախօսութեան ուրոյն զպրց մեր բացած լինի. « Ձգասս ճարտասանիցն բազմացրւցանէր»<sup>1</sup>: Յաղագն պիտոյից զիրըը, վերագրուած խորենացւոյն, ինդիր չէ՝ ինքնագի՞ր թէ թարգմանարար յօրինեալ, և Դաւիթ Անյաղիի Սահմանը իմաստափորեան ճարտասանութեան զասեր տուին Հայոց աշակերտութեան:

Երդին ու երաժշտութիւնն ալ մասն էին արևմտիայց ուսումնական ծրագրին<sup>2</sup>, որոյ ճայնականին գոյութեանը նաև մեր բով՝ ունինք նշարանը մը. և նոյն ինքն խորենացւոյն վերոյիշեալ վկայութիւնը, որոյ համեմատ մեսրորեան դպրոցաց աշակերտաց մէջ հաւաքած էին նաև մանուկներ «փափկածայն և երկարողիս», որ է երկար շնչով. յատկութիւնը՝ որ կարուր էին երգեցողութեան համար միայն, և սուկական զիտութեան աւելորդ:

Այս շրջանիս մէջ ալ յոյն հեթանոս մատենագրութիւնը վրտարուած կը թնայ հայ զպրոցէն: Եզնիկ կը զրէ « յոյն իմասսնոց » հակառակ. և մեր թարգմանիչը կը հրաժարին հեթանոս հեղինակները հայացնելէ:

#### Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Եարումակելի)

1. Առաջ. 83. — 2. Cabr. 1747. — 3. Առաջ. ....



Որքան համառուց են վաստակն եւ ժամանակը, և քանիօն երկար վարձըն և փոխարէնք, քանի սակաւ և իրրկ ոչինչ մի է զին զոր տամբ, և որքան բազում և անբաւ ստացուածն զոր վայելիմք:

ԱԼԻՇԱՆ

#### ԼԵԶՈՒԱԳԻՑԱԿԱՆ

#### Հ. Յ Ե Ր Է Ն Ն Ո Ր Բ Ա Ռ Ո Ն Ե Ր

ՅԱԿՈԲ ԿԱՐԵՑԻՈՒՑ

ՎԵՐԻՆ ՀԱՅՈՑ ՏԵՂԱՐՔԻՆ ՏԵՂ

(ապ. Վ. ԱՐԵՎԱՆ. 1908)

(Եար. տես բազմ. 1922 էջ 364)

#### 1. ախօրան

Ելանեն բազում ակունց և լինի զետ սուր և ախօրան և մտանէ անհուն ձորն Միրանայ և Սառչամու (Էջ 47):

Այլուստ անծանօթ բառ մ'է, որ իրրկ ածական գործածուած է գետին համար՝ «սըընթաց կամ ահեղ նշանակութիւննամք: Երկին ածականներուն համար հմտու նոյն հեղինակին բով՝ էջ 52. «ի թայլ զետու կանեն անթիւ ակունց, ի գեղջնին կարմրոյ լերանցն ժողովեալ մտանեն ընդ ձորն և լինին զետ սուր և զարհուրելի »:

Ախօրան բառը կազմութեամք բոլորովին անյայշ է, թթը. և պրս. լեզուներուն մէջ ալ նման ձև մը գոյութիւն չունի, որմէ փոխառեալ ըլլայ: Բայց զիտենք որ Յակոր կարնեցին ուրիշ տեղ մը նոյն բառը կը գործածէ իրրկ յատուկ անուն Ալուրեան զետի: «Եւ զետն զայ Դարսայ և յԱնոյ, որ է Ախօրան » (Էջ 50): Ասկէ կրնանց հետեցնել թէ յատուկ անունը յետոյ հասարակի վերածուած է:

#### 2. բանտար

Ջի այժմ բազարս այս յոյժ բանտար է նման Ստամպոլայ, որ տարին ԺՄ բնուած և ելանէ (Էջ 37):

Տեղին կ'երեկի որ կը նշանակէ « բանուկ, վաճառաշախ քատար» և ըստ այսմ կրնայ համարուիլ բան ։ տանիի բառերէն ծագած, ինչպէս ունինք բանուկ: Բայց այս ստուգարանութիւնը անշուշտ կեղծ է և բառը պէտք է զնել պրս. յայ. Bandar

«Նաւահանգիստ» ձեէն, որ հոս ածակա-  
նաբար գործածուած է: Ասոր վրայ արդէն  
խօսած ենց կեղծ Շապուհ Բազրատունոյ  
նոր բառերուն մէջ:

### 3. Դատկան

Լաւ և խելացի դատկան, հողագործ և  
փէշացար (էջ 39):

Կը նշանակէ «աշխատաէր, բանուկ,  
ժրաշան, դատող»: Կը գտնուի նաև Մշոյ  
բարբարին մէջ: Դատկան մարդ է:

### 4. Թաւամայրի

Եւ միւս կողմն է Ղուուռչան, երկիր  
խոր և թաւամայրի (էջ 14):

Կը նշանակէ «անտառախիտ»:

### 5. Թուն

Որ դեռ ևս պատերազմի է ընդ թունին  
Վանատիկայ (էջ 27):

Ինչպէս զրբին հրատարակիչը կոստա-  
նեան (էջ 66) կը նկատէ, լու մաք,  
ֆրանս. doge բառն է, որ վեճնետկիան  
դուբէրուն պատուանունն էր: բայց կու  
զայ ո՞չ թէ լատին կամ ֆրանսական ձեէն,  
այլ իտալ. dōge ձեէն, և կամ թէրևս  
ասկէ աղաւաղուած թրբ. руиа (?) ձեէ մը:

### 6. Ծաղրերես

Եւ են բնակիչը սորս մարդասէրը և  
կերընկալը, ըրիսառնեայը և ծաղրերես  
քահանայը և տօլվաթաւորը (էջ 16):

Կը նշանակէ «ժպտադէմ, ինդումերէս,  
ուրախ դէմք ունեցող»: չգիտէ նշիթ, բայց  
գիտէ Ուոձեռնը:

### 7. Կեր, կերուանք

Այս է թէմ և վիճակ՝ Արզում նստող  
փաշային կերուածքն, զի ամենայն շրջա-  
կայ բերդորայը և զաւարու, զոր կարգաւ  
պատմեցի, հուցմի և հրամանի ներքն սորս  
են (էջ 24):

Եւ իշխող, է սա մինչև ի բաւլու՝ Համ-  
բայ փաշային կերն, դէպի արևմուտս  
մինչ ի թոփաթ և ի Անրաստիոյ փաշային  
կերուածքն, և ի հրւախոյ կողմն մինչ ի  
Ցրապիցն և Ալուխոյ փաշայի կերուածն  
(էջ 25):

Եւ թէ մեծ պատերազմ լինի, թագա-  
ւորի հրամանաւ իւր կերուածքովն ամե-  
նայն ձի՛ թուրքի ձիաւոր ելանէ քաղաքէս  
(էջ 26):

Այս հետաքրքրական բառը բանի մը  
ուրիշ տեղեր ալ կը գտնենց կեր կամ գիր,  
սեռ, գերոյ ձևով: Այսպէս՝

Եւ կինն այն հարցեալ սասց թէ ինչ  
մարդ ես, և նա ասաց թէ ես երէց եմ  
և զերոյ տէր (Յայսմ. յունվ. Յ, Ս. Ստե-  
փանոս Յուսկան որդոյ գարբին մէջ):

Եւ նորա բազում սիրով ընկալեալ զի՞զ՝  
ետ փոխան հայրենեացն... զՀամարի  
և այլ զեղօրէս բազում, ի կայեն զՊատս  
իւր կերովն (Օրբ. էջ 263):

Տայ փոխան հայրենեացն... զՀամարի  
և այլ զեղօրէս բազում, ի կայեն զՊատս  
իւր կերովն (Օրբ. էջ 291):

Եւ տան նմա... զիլոտն իւր երկրան...  
և զբերդն Յորուանայ իւր կերովն (Օրբ. էջ  
301):

Յօստար աշխարհէ եպիսկոպոս, վարդա-  
պես կամ երէց կամ գերոյ տէր, առանց  
թիմի եպիսկոպոսի մի՛ շրջեսցեն կամ շի-  
նեսցեն, այլ նորա հրամանաւ՝ ըստ պատ-  
շամի (կիր. պամ. էջ 170\*):

Քննիչները զանազան ձևով մեկնած են  
բառս. այսպէս Շահնազարեան՝ Օրբիկեանի  
առաջին օրինակին մէջ կը մեկնէ «եկա-  
մուտ», բայց միւսները առանց բացարու-  
թեան կը թողու։ կոստանեան՝ Յակոր  
Կարնեցւոյ հրատարակութեան մէջ կեր -  
ուուել բառէն կը հանէ: Մենց ալ (Հայ.  
Նոր Բառեր հին մատենազրութեան մէջ  
վենեստիկ 1913, էջ 74): Կերակոսի

\* Նոյն տե՛ս նաև կանոնագրեն մէջ, էջ 176. «Յօ-  
ստար աշխարհէ եպիսկոպոս կամ վարդապես կամ երէց  
կամ զեռոյ տէր՝ առանց եպիսկոպոսի թեմին մի՛ շրջ-  
եսցեն».

զերոյ տէրը եկեղեցական պաշտօնեայ մը, թէրևս «օրբեպիսկոպոս» դրած էինք, իսկ զեր բառին բուն նշանակութիւնը և ծագումը անսարյգ կը համարէինք:

Վերոյիշեալ օրինակները միամին առանելով՝ կրնանց հետեցնել թէ կիր, կերուածք կամ զեր կը նշանակէ «գաւառ, վիճակ, թեմ». այս իմաստը յայտնի կերպով կ'երել, եթէ համեմատենք Օրբ, էջ 291 դրուած մէկ հաստուածը. «ուայ փոխան հայրեննեցն... զշրաշկարերդ իւր զաւատովն և այլ բազում զեղորէ ի վայոց ձոր», որ Օրբեւսանի առաջին օրինակին ճիշտ կրկնութիւնն է և ուր կիր բառին տեղ դրուած է «գաւառ»: Նոյն տեսակի բան մ'է նաև վերը «զմրուտն իւր երկրան»:

Կ'ուցէի այս կիր կամ զեր բառը համեմատել պր. ճշ ց'ը «բռնէ» բառին հետ, ինչպէս ունինք հայ. կաւ և կարուած, բայց պարսկերն բառարաններու մէջ ց'ը բառին դէմ նման իմաստ մը գոյութիւն չունի:

#### 8. մնաւորիլ

Զազգսն Հռոոոմոց՝ որ եկեալ և անաւորեալ էին յերկիրս Հայոց, զամեննեսեան հանեաց և արսորեաց տամրց և ընտանեօք մինչև առ յափն Պոնտոսի (էջ 22):

Կը նշանակէ «ընտանիք՝ տուն տեղ կազմել»: զործածական է Երկանի, Շամալսիի, Վանի և Տիֆլիսի բարրառներուն մէջ՝ տնաւորել, տնաւորուիլ ձևով:

#### 9. փութեայ

Սպանդանոցք և շուկաներ, սալարակապ իսաներ և փութկաներ, բարտաշ զեղեցիկ շինուածովք և եկեղեցիք բազումք (էջ 31):

«Սպանդանոցք իսաներ» (այս է բարաշէն իշխաններ) ձեին համագորութիւնը կը ցուցնէ որ փուրկայ բառն ալ նման իմաստ մը ունենալու է: Եւ արդարէ Առանձինի մէջ կայ փուրկայ կամ փուրկայ՝ որ կը մեկնուի «կարաւանի իջևան, բէրվանակ-

բայ»: Բառիս հնագոյն ոսկեղարեան գործածութիւնը ունի Գորիա և Յմ. էջ 69. «Եւ հրամայից զատաւորն Եւետոս զահճապետի տանել զերկոսեան և արգելուզ ի բանտի, ուր արգելեալ էին ընկերց իւրեանց ի փուտկայի միոջ որ կոչի բնթթիկա»: Ալիշան, Հին հաւ. էջ 303 այս բառը կը հանէր պր. butkada «Կատառն, պանդոկ» բառն, բայց ըստ Goussenի պէտք է գնել փոխառեալ ասոր. բնեց «կապելայ, հանրատուն» բառէն (տես Հ. Վարդաննեանի յօդուածը՝ ՀԱ 1913, 136): Զարմանալի է միայն որ կարնեցին այսպիսի հին և զործածութենին ինկած, հազուազիւտ բառի մը լաւ ծանօթ է: Նոյն բառը զիտէ նաև Առաք. Պոմ. և կը զործածէ բանի մը անձամ. Զետեղեալ բնակեցոցին ի փութկայն՝ որ է բարվանսարայ (էջ 111. հրատարակիչը յատուկ անուն կարծելով բառը՝ դրած է զիւատու): Վասն տանց և ապարանից, բազանեաց և փութկայից, որ է բարվանսարայ (էջ 373). Բաղանիքներ և փութկաներ և բաղացիք պարիսպն (էջ 514): Ասոնց համեմատ նաև բառզիրք Երեմիայ, էջ 325 փորկայ «բարվանսարայ»:

Այս բոլոր նոր զործածութիւններէն ուզեցի կարծել որ փուրկայ բառը արարեքի մէջ ալ թէրևս գոյութիւն ունեցած ըլլայ, որմէ փոխառութեամբ անցած ըլլայ ստորին Հայերէնի. բայց Գամուսի ծովածաւալ բառարանին մէջ (թրք. թբգմ. Գ. էջ 38) գտայ միայն արար. Ծա fatq «լայնատարած՝ ընդարձակ տեղ», որ անշուշտ նոյն բառն է, բայց յամենայն դէպս Հայերէնի մայրը չէ:

#### 10. քարածոր

Եւ գնացեալ հասանէ մինչև բարածորն Ակնայ և Արապկերու (էջ 14):

Եւ մտեալ բարածորն Ակնայ և Արապկերու (էջ 48):

Կը նշանակէ «երկու մեծամեծ բարածեռներու միջև գտնուած ձորը»:

Հ. ԱձԱԽԵԱՆ